



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

ք. Եղեգնաձոր

23/09/2020

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ*

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Նարինե Գրիգորյանը, Գառնիկ Խաչատրյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Վալոդյա Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Լուսինե Մարտիրոսյան, Աշոտ Հարությունյան, Վարդան Ավագյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

23.09.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 23.09.2020 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը.

1) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2) ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3) ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՄԱՐԶԱԴԱՇԻ ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4) ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5) ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

6) „ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի

ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7) ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ,, ՀՈԱԿ-Ի ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԲԱԿԱՅԻՆ ԿԱՐՈՒՍԵԼՆԵՐԸ ԱՆԴՐԱՆԻԿԻ 12 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
8) ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին „Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և „Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասի պահանջներով. 1.Տալ համաձայնություն համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 4974.0 հազ ՀՀ դրամ պակասեցնել, ավելացնելով՝

1)350.0 հազ ՀՀ դրամ բաժին 4 խումբ 5 դաս 1 ճանապարհային տնտեսություն ոլորտի շենքերի և կիսակառույց շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին /հոդված 4251/ համայնքի փողոցների անցումների նշագծման աշխատանքների ֆինանսավորման համար :

2)500 հազ. դրամ բաժին 4 խումբ 5 դաս 1 ճանապարհային տրանսպորտ ոլորտի մասնագիտական ծառայություններ հոդվածին /հոդված 4241/ համայնքի տարածքում անվտանգ երթևեկության կազմակերպման, ճանապարհային նշանների ու գծանշումների սխեմայավորման և քարտեզագրման համար փաթեթների կազմման ծառայությունների ֆինանսավորման համար :

3)800 հազ.ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ոլորտի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին /հոդված 4251/ „Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզ,,ՀՈԱԿ-ի շենքի տանիքի մասնակի նորոգման համար :

4)805 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտին՝ որից 765 հազ ՀՀ դրամ այլ հարկեր հոդվածին /հոդված 4822/ և 40,0 հազ ՀՀ դրամ պարտադիր վճարներ հոդվածին /հոդված 4823/ կադաստրային գործարքների իրականացման համար :

5)20 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին / հոդված 4251 / ՔԿԱԳ-ի շենքի արխիվի հատակի մասնակի նորոգման աշխատանքների ֆինանսավորման համար :

6) 87,0 հազ. ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանության ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին հողվածին /հողված 4511/ նախորդ տարիների պարտքի մարման ֆինանսավորման համար :

7) 92,0 հազ. ՀՀ դրամ բաժին 5 խումբ 6 դաս 1 շրջակա միջավայրի պահպանում /այլ դասերին չպատկանող/ ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/կազմակերպություններին հողվածին /հողված 4511/ համայնքի տարածքում առուների մաքրման աշխատանքների ֆինանսավորման համար:

8) 985,0 հազ. ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հողվածին /հողված 4251/ համայնքի Արսենյան 9, Մոմիկի 2 , ,Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ, ՀՈԱԿ-ի հարակից տարածքում/ և ՎՏԲ բանկի դիմաց աղբամանների տեղադրման հարթակների նորոգման ֆինանսավորման համար:

9) 695.0 հազ ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ ոլորտի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում հողվածին /հողված 4251/ Մոմիկի 4 բ/2 բակում մանկական խաղահրապարակի կառուցման և հարդարման համար:

10) 280.0 հազ. ՀՀ դրամ բաժին 4 խումբ 5 դաս 1 ճանապարհային տրանսպորտ ոլորտի շենքերի և կառույցների նորոգում և պահպանում հողվածին /հողված 4251/ համայնքի փողոցներում թվով 8 հատ արհեստական անհարթություններ կառուցելու համար, այդ թվում Սպանդարյան փողոցում 3 հատ, Ավազյան փողոցում 3 հատ և Արսենյան փողոցում 2 հատ :

11) 360.0 հազ ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանություն ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին հողվածին /հողված 4511/ „Եղեգնաձորի համայնքային տնտեսություն, ՀՈԱԿ-ի աղբահանության բանվորի աշխատավարձի վճարման համար: 2. Տալ համաձայնություն բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ոլորտի ներքին գործուղումներ հողվածից /հողված 4221/ 185.0 հազ ՀՀ դրամ պակասեցնել, ավելացնելով 65.0 հազ ՀՀ դրամ նույն ոլորտի սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հողվածին / հողված 4252/ և 120 .0 հազ ՀՀ դրամ կենցաղային և հանրային սննդի նյութեր հողվածին /հողված 4267/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ն/

Լսեցին

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՁԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 11 դեկտեմբերի 2006 թվականի թիվ 1730-Ն որոշումները.

1. 10-001-0322-0021 կադաստրային ծածկագրով, 0.14827 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հողատարածքին տալ հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի թիվ 1/3:
3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ
ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՁԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 մարտի 1997 թվականի թիվ 51 որոշումը.

1. Հաշվի առնելով, որ նախկինում Եղեգնաձոր համայնքին պատանող, համայնք Եղեգնաձոր ք., Սպանդարյան փողոց թիվ 40/3 հասցեում գտնվող մարզադաշտի սպասարկման և շահագործման համար հողատարածքի հատկացման փաստաթղթերը չեն պահպանվել, հատկացնել 2.24460 հա հողատարածք՝ այն սպասարկելու և շահագործելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ.-ի թիվ 1920-Ն որոշումը.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, 10-001-0046 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների, 0.0658 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով, որ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում.

1. Հաշվի առնելով, որ Ռաֆիկ Արտեմի Մխիթարյանին, Անահիտ Վազգենի Հակոբյանին, Հասմիկ, Լուսինե, Սերինե և Գեղամ Ռաֆիկի Մխիթարյաններին Վայոց ձորի մարզի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 05.09.1991թ.-ի թիվ 5 որոշմամբ հատկացված 0,66 հա հողատարածքների մակերեսները չեն համապատասխանում հողամասի չափերին, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերոնշյալ անձանց կողմից առաջին անգամ են իրականացվում պետական

գրանցման աշխատանքներ՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.0642.9 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող հողատարածքի նկատմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

„ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Դեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

1. Լրացնել և հաստատել << Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

„ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ,, ՀՈԱԿ-Ի ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ԲԱԿԱՅԻՆ ԿԱՐՈՒՍԵԼՆԵՐԸ ԱՆԴՐԱՆԻԿԻ 12 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Դեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով.

1.Տալ համաձայնություն <<Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ >>ՀՈԱԿ-ի 125000 ՀՀդրամ հաշվեկշռային արժեքով ապամոնտաժված բակային կարուսելները տեղադրել համայնքի Անդրանիկի 12 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի բակում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով.

1. Համայնքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություն կատարել՝ որպես հիմնական միջոց ավելացնելով Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամից որպես նվիրատվություն երկու լրակազմ շարժական էլեկտրական ցանկապատ՝ 2398224 ՀՀ դրա արժեքով՝ 1,4 հա տարածքի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ


ՌՌԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՎԵԼ ԵՎ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Նիստի արձանագրության համար՝ 89-Ա

